

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի ուղերձը Հայաստանի
Հանրապետության Անկախության տոնի առթիվ

Սիրելի՛ հայրենակիցներ,

Այսօր լրանում է Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 31-ամյակը: Անկախության հորեղանը տոն է, որը պիտի հպարտության վեհ զգացումով լցնի մեր բոլորի հոգիները:

Անկախության 31 տարիներին Հայաստանն ունեցել է բազմաթիվ նվաճումներ ու ցավալի կորուստներ: Ամենամեծ նվաճումն ինքնին անկախ պետականության հռչակումն էր:

Այսօր միահյուսվում են մեր երկրի և ժողովրդի պատմությունը, ներկան և ապագան: Մենք պետք է դասեր քաղենք անցյալից: Մեզ անհրաժեշտ է ազգային ինքնության և պետականության խորին գիտակցում: Անհրաժեշտ է միասնություն՝ հայրենիքը դարձնելու անվտանգ, պաշտպանունակ, ուժեղ և բոլոր առումներով առողջ պետություն: Անհրաժեշտ է համբերություն և այն բանի գիտակցում, որ դժվարությունները ժամանակավոր են, և մենք կարող ենք դրանք հաղթահարել: Այսօր Հայաստանը կայուն զարգացող երկիր է, որը կառուցելու համար պետք է ջանք չխնայել ու ստեղծել այն նոր երկիրը, որի քաղաքացին լինելը հպարտություն կներշնչի բազմաթիվ սերունդների:

Մեր ճակատագիրը մենք պետք է տնօրինենք: Մենք պետք է ունենանք տեսլական, առաջարկներ և իրագործենք գաղափարներ ու ծրագրեր: Մեր խնդիրն է հաղթահարել դժվարությունները՝ դրսևորելով հավաքական կամք:

Այս օրը մեր հավատի, վստահության ու համոզմունքների խորհրդանիշն է, քանզի երկրի անկախությունը բալասան է դառնում ոչ միայն անցած վերքերը բուժելու, այլև ուրախության ու զարթոնքի, վաղվա նկատմամբ անսահման հույսեր պարզելու առումով:

Վերստին խոնարհվում եմ բոլոր նրանց հիշատակի առաջ, ովքեր իրենց զոհաբերեցին Հայաստանի անկախության, ինքնիշխանության, Արցախի ազատության և անվտանգության համար:

Խորին հարգանքս եմ հայտնում բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել անկախության ձեռքբերման մեջ: